

Չութիւն յուրախութիւն համայն
Ռուսիոյ:

Հակականին ռտորագրեալ է

ՄԿՐՏԻՉ

ԿԱԹՈՒՂԻԿՈՍ

ԱՄԵՆԱՅԻՆ ՀԱՅՈՑ.



ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Հոկտեմբ. 14-ին.

Ամսոց 13-ին կիւրակէ օրը ի յիշատակ թաղման ի ջէր հանդուցեալ կայսեր Ամենայն թուսաց ԱՊ. ԵՔԸԸՆԴԻ Գ. -ի Վեհափառ Հայրապետի հրամանով Ա. Խճիածնի Մայր Տաճարում հանդիսաւոր պատարագ մատուցուեց և կատարուեցաւ հոգեհանգստի կարդը Այս տիտուր հանդիսին ներկայ էին Վեհափառ Կաթողիկոսը, ամբողջ միարանութիւնը զեմարանի ուսուցչական խումբը և բոլոր աշակերտները, պաշտօնական և հրաւիրեալ անձինք և ժողովրդականների խուռն բազմութիւն: Հոգեհանգստեան ժամանակ Վեհափառ Հայրապետը դառնալով գեպի ժողովուրդը հետևեալ խօսքերով միմիթարեց: —

«Մի վերջին պարագ ունիմք կատարելու, ափսոն որ շատ ուշ մնացինք, հանդուցեալ կայսեր թաղման հանդէս կատարուած է ամսոյս եօթին, այն ինչ մեզ հաղորդուեց երկու երեք օր յետոյ: Սորա համար ես մտածեցի, որ հանդուցեալ կայսեր թաղման հանդէս կատարեմ կիրակի օր, որպէս զի Հայ ժողովրդեան մեծ բազմութիւն լինի Մայր Աթոռի Ա. Տաճարում: Փառաւոր և հանդիսաւոր լինի արարողութիւն»:

«Կը ծանուցանեմ ձեզ ժողովուրդ Հայոց, այժմ պիտի կատարեմք վերջին հոգեհանգստա, ուստի վերացեք հոգւով այնպէս, որպէս թէ հանդուցեալ կայսեր գերեզմանին վերայ կեցած՝ աղօթում ենք ջերմեռանդ, և մեր ա-

ղօթք թէ փաղ լինի թէ անագան՝ իւր տեղ հասնումէ. զի Աստուած մերձ է, և Սորա համար չկայ ժամանակի միջոց: Բովանդակ մեծին թուսիոյ աշխարհ՝ լայաւ անզուգական կայսեր մահը. Արարատեան Մայր Աթոռն ևս իւր համայն ժողովրդով և միարանական ուխտիւ պէտք է լայ մեր խաղաղաւելը Կայսեր կորուստ: Սողոմոն որ խաղաղութեան թագաւոր էր. գուցէ ժողովուրդ նորա համար կարծիք ունէր թէ անմահ է, չի մեռնիր. նա բացականչելով խոստովանեց թէ «Եմ եմ և ես մարդ մահկանացու՝ ծնունդ հողածին Կախաստեղծին ...»:

«Մի օր ծնաւ Աղեքսանդր և աւետեցին թէ թագաժառանդ ծնաւ. մի օր թագ կապեցին և ասացին թէ—թագաւոր եղաւ՝ այսօր էլ ձայն գուժեց Լիվադիայէն թէ—Աղեքսանդր մեռաւ և թաղեցաւ: Այսպէս թէ թագաւոր և թէ ժողովրդի զաւակ հաւասարապէս ենթակայ ենք մահուան: Օրհնեալ լինի Քրիստոս, որ խափանեց մահ, կը մեռնինք միայն մարմնով, այլ կենդանի կմնամք հաւատով:»

«Այսօր Մայր Աթոռ յատկապէս հոգւոյ ձաշ պատրաստած է, կը ծանուցանեմ ձեզ, նեղեալ կարօտեալ, հայրենիքէն զրկուած զաղթականութեան թշուառ զաւակները, որ եկեր էք պատսպարան ու հաց կը խնդրէք, հրամայեցէք ի սեղանատուն, կշատապինդ կերէք, օրհնեցէք հանդուցեալ կայսեր յիշատակ. զի այս սեղանն ևս Սորա շնորհիւն է պատրաստուած: Այս, անցեալ ձմեռ Ես զիմեցի Նորին կայսերական ողորմածութեան՝ դարման խնդրելու գաղթականաց և սովետների համար, Նորին կայսերական Մեծութիւն ամենայն վստահութեամբ և բարեսրտութեամբ հրամայեց և արտօնեց հանգանակութիւն անել Մեծին թուսիոյ ջերութեան ամեն կողմեր, ի նպաստ սովելոց ամեն կողմերէն թափուեցան նըպաստները:»

«Անմոռանակի է Աղեքսանդր Գ. Կայսեր յիշատակ համայն ժողովրդոց համար, մանաւանդ մեզ՝ և մենք պարտաւոր ենք ի բոլոր սրտել աղօթել Նորա համար: Այժմ որ հոգեհան-

զիստ սկսուումէ, ամենքդ էլ սրտով և հոգւով աղօթեցէք և ասացէք—Ասուած լրւաւորէ հանգուցեալ կայսեր հոգին, փոխանակ աշխարհի թագաւորութեան՝ երկնից արքայութիւն պարզեց և արքայութեան սուրբ ճամփին արժանի լինի: Ամէն:

Հոգեհանգստից յեայ բոլոր ներկայ եղողները հրաւիրուեցան հոգեհացի, որը Վեհափառ կաթողիկոսի կարգադրութեամբ միաբանութիւնը պատրաստել էր ի յիշատակ հանգուցեալ կայսեր թաղման: Առանձին սեղաններ էին պատրաստած՝ զինուորների և հարիւրաւոր աղքատների համար: Միաբանութեան սեղանատունը—հրաւիրուած էին Վաղարշապատի բոլոր պաշտօնական և պատուաւոր անձինք: Սեղանին ներկայ էր Խնքը կաթողիկոսը ամբողջ միաբանութեամբ: Հանգուցեալ կայսեր յիշատակին հոգեթաս առաջարկելով՝ Վեհափառ Հայրապետն ասաց.

«Երանի՛ այն օրերին յորում կը խմէինք բաժակներ Աղեքսանդր կայսեր կենաց, բայց պիտի ասէք թէ՝ մեռնելով պիտի մոռցուի՛ Նորա յիշատակ, ոչ երբէք. Այս կենդանի է իւր թագաժառանդ Որդւով, արդարեւ մեր մեռնելով շատ անգամ մեր յիշատակ չի մնար երկրիս վերայ, բայց կայսեր յիշատակ երբէք չի մոռցուիր. Աղեքսանդր կայսր մեռաւ, Ասրան յաջորդեց թագաժառանդ Որդին, թագաւոր կը մեռնի, բայց թագաւորութիւն չի մեռնիր, թագաւորութիւն պիտի տեէ աշխարհիս վերայ որբան որ Աստուած կամենայ. Աղեքսանդր կայսր կենդանի է հաւատով և հոգւով երկնից մէջ, զի Աւետարան կասէ.— «թէ որ հաւատայ յիս թէպէտ և մեռանիցի՛ կեցցէ» բայց ես կասեմ—Այս կենդանի է երկրիս վերայ իւր Թագաժառանդով որին իւր ոգին և ուղղութիւն կտակեց: Աղեքսանդր կայսեր յիշատակ ոչ միայն իրբեւ թագաւորի պիտի պահնէք, այլ և իրբեւ խաղաղութեան հրեշտակի, Այս մի խաղաղութեան հրեշտակ էր. այս, որ իւր բովանդակ կենաց մէջ միշտ խաղաղութիւն սիրեց և շուղեց որ իւր օրում մի կաթիւ արիւն թափուի: Պատմութեան

մէջ կը կարդանք հին Աղեքսանդրի պատմութիւն, որոյ կեանք արիւնով լի էր. նա Յունաստանէն տիրեց մինչև Հնդկաստան և նորա արշաւանքի քարտէս գծողներ կարմիր գծով կը նշանեն նորա արշաւանքի ճանապարհ, շատ թագաւորներու պատմութիւն արիւնով լի է, որովհետև պատմութիւն միշտ կը մնայ և կը շարունակուի սերունդէ ի սերունդ և կը կարգացուի:

Աղեքսանդր Գր այգպիսի յիշատակ չմողուց պատմութեան մէջ, խաղաղութեան ճանապարհ էր նորա ճանապարհ. մենք այստեղ կը վայելենք Նորա հոգւոյ ճաշ և կը խմենք Նորա յիշատակն օրհնելով. թերեւս Այս է կը վայելէ այնտեղ արքայութեան ճաշը, զի Քրիստոս ասաց. «Երանի որ կերլիցէ ճաշ յարքայութեան Աստուծոյ», Այս արիւնոտ ձեռքով չգնաց, այլ խաղաղութեան մի շուշան ձեռքին բռնած գնաց դասակից լինել խաղաղութիւն և արդարութիւն սիրող թագաւորներին Ուրեմն օրհնենք Նորա յիշատակ և խմենք ասելով՝ օրհնեալ լինի Աղեքսանդր կայսեր յիշատակ և հանգիստ իւր խաղաղասէր հոգւոյն:

Առաջարկելով երկրորդ բաժակը թագաւոր կայսեր ՆիկոլաՅ Աղեքսանդր Չի կենացը—Վեհափառ Հայրապետը ասաց՝

«Մի մեծ պարտականութիւն էլ ունինք կատարելու, հանգուցեալ Աղեքսանդր կայսեր յիշատակն օրհնելով խմեցինք. այժմ կը մնայ մեզ Նորա թագաժառանդ Որդւոյն, արդի ՆիկոլաՅ կայսեր կենաց խմել: Միտքս մի բան եկաւ, ասեմ: Սաղմու որ համայն եկեղեցիք կը պաշտեն և կերպեն, նորա մէջ մի զուխ կայ. Դաւիթ թագաւոր և մարգարէ թերեւս իւր մահուան անկողնի մէջ իւր Սոզոմոն որդւոյն համար երգել է այդ Սաղմու, «Ասուած, զիրաւունս քո արքայի տուր և զարդարութիւնս քո օրգւոյ թագաւորի, զատեզմովուրդս քո արդարութեամբ և զաղքաս քո իրաւամբ»: Այս Սաղմու որ Սոզոմոնի համար զրուած էր, բայց տիրապէտ Քրիստոսի վերայ կատարուեցաւ, որում կյաջորդէ:

Ճագեսցի յաւուրս նորա արդարութիւն, բաշում խաղաղութիւն մինչև կատարեսցի լուսինն», ինձ կը թուի թէ հանգուցեալ Ազէքը սանդր կայսրն էլ իւր վերջին օրերում նոյն Սաղմոս կարդաց, «Աստուած զիրաւոնս քո պրայի տուր և զարդարութիւնս քո որդոց թագաւորի»։ քան զայս աւելի ի՞նչ մեծ աղօթք կարող ենք անել Սորապսակ ՆԻԿՈԼԱՅ ԿԱՅՑԵՐ համար։

Թող Աստուած Արան իմաստութիւն և զօրութիւն ապա, որ արդարութեամբ դատի իւր ժողովուրդը, արդարութեամբ ճշմարտութեամբ և ուղղութեամբ բարձրանայ Մեծին թուսիոյ թագաւորութեան Գահ։

Կեցը՝ ուրեմն ՆԻԿՈԼԱՅ ԿԱՅՑՈ համայն թուսիոյ։

Երեանի զօրավամբի զնդապետը, որը նոյնպէս ներկայ էր սեղանին, առաջարկեց մեր ժողովրդի զգացումների թարգման հանդիսացող ներկայ Հայոց Վեհափառ կաթուղիկոսի կենացը։

Վեհափառ Հայրապետի թարգմանն էր Ճեմարանի ուսուցիչ՝ պ. Յովհաննէս Յովհաննիսեանը։

ՊԱՇՕՆԱԿԱՆՔ

ՔԱՂԱԿԱՆ Ի ԿՈՆԴԱԿԱՅ ՎԵՀԱՓԱՌԻ
ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱԶԳԻՒԾ

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1555 յանուն Ղեռնդ քահանայի Տէր Աստուածատրեան ի Բագու, որով շնորհէ նմա իրաւունս կրել իւազ ոսկեզօծ, ըստ միջնորդութեան Գերապատիւ Մեօրու Արքեպիսկոպոսի սեպանմբերի 6։

*
* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1591 յանուն Սարդիս քահանայի Սակերչեան ի Սոր Սատիֆեան, որով շնորհէ նմա իրաւունս կրել ի պատիւ գլուխութիւն գլուխութիւն և սեպանմբերի 27։

Հունս կրել զղլիարկն թաւշեայ «կամիլաւկա» անուանեալ ըստ ինդրանաց «Մարդասիրական ընկերութեան» քաղաքին։ սեպանմբ։ 12։

*
* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1616 յանուն Արկողայոսի Թագեռուսան ի Շամախի, որով օրհնէ զնա և զամենայն վերդաստանն, սակա կառուցման նորա զկաթուղիկն Ա. Սաեփաննոսի վանուցն Սաղմանու, ծախսեալ զգումարն վեց հարիւր յիսուն բուրլեաց։ սեպանմբ։ 14։

*
* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1617 յանուն Բարդուղիմէս քահանայի Բէդկիւլեան որ ի Սաավոպօլ որով շնորհէ նմա իրաւունս կրել ի զոււս զթաւշեայ զիսարկն վամփլաւկա» անուանեալ ըստ ինդրանաց ժողովրդեանն, սեպանմբ։ 15։

*
* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1618 յանուն Մինաս քահանայի Միրանեան ի Վագիկաւկազ, որով շնորհէ նմա զպահիւ աւագ քահանայութեան, ըստ ինդրանաց ժողովրդեանն, սեպանմբ։ 15.

*
* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1631 յանուն Ասքանազ Տէր Արմէնեանի և Տիկնոջն, որով օրհնէ զոսսա ընդ բարենապատակ ձեռնարկութիւն իւրեանց՝ բանալ անձնական ծախիւք մի զասեան զպրօց ի Համամլի զեղջ և կարգելով զոսսա իննամակալաւ, թոյլատրէ բանալ զդպրոցն։ սեպանմբ։ 17.

*
* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1669 յանուն Եղնիկ քահանայի Ելզնիկեան, որով շնորհէ նման իրաւունս կրել ի զուս զթաւշեայ զիսարկն վամփլաւկա» անուանեալ ըստ միջնորդութեան Գերապատիւ Առաջնորդին Վրաստանի և Ամէրէթի Գեորգ եպիսկոպոսի Սուրբէնեան, սեպանմբ։ 27.

*
* *